

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մալիշկայի համայնքապետարանը հրավիրում է հողամասի աճուրդ վաճառք 2 լոտով, որը տեղի կունենա 2021թ.-ի սեպտեմբերի 13-ին ժամը՝ 12:00-ին: Հասցե՝ Վայոց ձորի մարզ Մալիշկա համայնք 1-ին փողոց 1 շենք՝ համայնքապետարանի շենք:

ԼՈՏ 1 Մալիշկա համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող.

0.367 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0260-0033 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական , գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 250%-ի չափով՝ 57344 (հիսունյոթ հազար երեք հարյուր քառասունչորս) հազ. ՀՀ դրամ

ԼՈՏ 2 Մալիշկա համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող.

1.36959 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0276-0017 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական , գործառնական նշանակությունը՝ արտոտվայր) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200%-ի չափով՝ 175000 (հարյուր յոթանասունհինգ) հազ. ՀՀ դրամ

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է աճուրդին նախորդող երրորդ օրը՝ 07.09.2021թ. 18:00:

Հայտեր կարող են ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր իրենց հետ կունենան անձնագիր, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը: Հայտի ներկայացման համար անհրաժեշտ է վճարել 5 000 ՀՀ դրամ տեղական վճար և նախավճար՝ աճուրդի օրը լոտի 50%-ի չափով :

Վճարում կարող եք կատարել ինչպես կանխիկ՝ Մալիշկայի համայնքապետարանի հաշվապահություն, այնպես էլ անկանխիկ հետևյալ հաշվեհամարին՝

-տեղական վճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355119166 Կենտրոնական գանձապետարան,

-նախավճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355119109 Կենտրոնական գանձապետարան:

Աճուրդում չհաղթած մասնակցի մուծված նախավճարի չափը վերադարձվում է տեղում՝ գրավոր դիմելուց հետո:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել Մալիշկայի համայնքապետարան, հեռ. (+374) 93 18 90 64 (Մամվել Այվազյան)

13.08.2021թ.